

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՈՒՆԻՍ 2026



ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-295-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 01.01.2027թ.)

- Նպատակ ունենալով մի կողմից նվազեցնել մարդու առողջությանը վնաս հասցնող ապրանքների սպառումը, մյուս կողմից՝ ուղղակի հարկերի (շահութահարկ, եկամտային հարկ) բեռի իջեցման դիմաց բարձրացնել անուղղակի հարկերի (ակցիզային հարկ) բեռը, օրենսգրքում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝
- 1. ինդեքսավորում. սահմանվել է ակցիզային հարկի դրույքաչափի (որը 2027-2029թթ. յուրաքանչյուր տարվա համար առանձին չէ) բազային գործակցի տարեկան 3 տոկոսանոց աճ,
- 2. դրույքաչափերի տարեկան բարձրացում ավանդական ծխախոտի, տաքացվող ծխախոտ, նարգիլեի, էլեկտրոնային ծխախոտի (հեղուկների) համար,
- 3. նոր հարկվող ապրանքատեսակ՝ նիկոտինային տոպրակներ. մինչ այժմ չհարկվող նիկոտինային տոպրակները (Nicotine Pouches) այսուհետ կհարկվեն,
- 4. մրգային օղիների հարկային բեռի նվազեցում ի տարբերություն այլ ապրանքների՝ պտուղներից և հատապտուղներից պատրաստված օղիների,
- 5. կոնյակի համար կսահմանվի միասնական դրույքաչափ՝ 1 լիտր (100%-անոց սպիրտի վերահաշվարկով) կոնյակի համար անկախ դրա հնացման տարիքից:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-309-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 01.09.2026թ.)

- Փոփոխությունները նպատակ ունեն էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաները (էլեկտրոնային ՀԴՄ) դարձնել սովորական ՀԴՄ-ներին լիարժեք այլընտրանքային գործիք և ընդլայնել դրանց կիրառության ոլորտները:

- Օրենսգրքի 56-րդ հոդվածում մանրածախ առևտրի, բնակչության համար աշխատանքների կատարման և (կամ) բնակչությանը ծառայությունների մատուցման գործարքների մասով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հատուկ ծրագրեր կիրառող կամ օրենսգրքի 74-րդ գլխով սահմանված կարգով հսկիչ դրամարկղային մեքենա շահագործող ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը կարող է հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր դուրս չգրել, եթե ապրանքի գնորդը, աշխատանքն ընդունողը և (կամ) ծառայությունն ստացողը չի պահանջում դուրս գրել հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր:
- Այս կարգավորման առումով 2027թ. հունվարի 1-ից որպես հսկիչ դրամարկղային մեքենա շահագործող դիտարկվելու է նաև էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա շահագործողը: Հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ապրանքը մատակարարելու, աշխատանքի կատարումն ավարտելու պահին, իսկ բեռնագիրը դուրս է գրվում մինչև ապրանքի տեղափոխությունը: 2026թ. սեպտեմբերի 1-ից նախատեսվում է, որ բացառությամբ նույն հոդվածի 8-րդ և 8.1-ին մասերով սահմանված դեպքերի՝ հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում մինչև ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումն ավարտելու և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու պահին, բեռնագիրը դուրս է գրվում մինչև ապրանքի տեղափոխությունը:
- Օրենսգրքի 57-րդ հոդվածում 01.01.2027թ. -ից՝
- 1. հարկ վճարողի կողմից տեղափոխվող ապրանքը օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնով ուղեկցվելու կարգավորումները տարածվում են նաև էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնով ուղեկցվելու վրա,
- 2. նույն հոդվածով նախատեսված է, որ Կառավարության սահմանած կարգով դուրս գրված (գեներացված) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնը նույն հոդվածի իմաստով հանդիսանում է ուղեկցող փաստաթուղթ:

- Որպես ընդհանուր նորմ սահմանվել է, որ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան որպես ծրագրային ապահովում հնարավորություն է ընձեռում գեներացնելու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն հետևյալ դեպքերում.

1. կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով,
 2. էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղեւորափոխադրումների, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումների իրականացման գործարքների մասով,
 3. էլեկտրոնային առողջապահության համակարգին միացած բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով վճարումն ընդունվելու դեպքում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համար,
 4. Կառավարության սահմանած գործունեության ոլորտներում, դեպքերում և ժամկետներում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից աշխատանքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս:
- Սահմանվել է, որ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի տեխնիկական պահանջները, դրա հաշվառման, դրա միջոցով գեներացվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմանները, ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի պահանջները, ինչպես նաև այլ հարկ վճարողի անունից էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա կիրառելու և էլեկտրոնային կտրոն գեներացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:
 - Մինչև վերոնշյալ կարգավորումների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցողների կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների դեպքում կիրառվում են մինչև 2027թ. հունվարի 1-ը գործող կարգավորումները:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին **ՀՕ-319-Ն, «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին** **ՀՕ-320-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 18.10.2026թ.)**

- Նախատեսվում է հստակեցնել անշարժ գույքի կադաստրային քարտեզներում և պետական գրանցման տվյալներում առկա սխալների հայտնաբերման ու ուղղման գործընթացը: Սահմանվում են սխալների երկու հիմնական տեսակներ՝ քանակական և որակական: Քանակական սխալներ են համարվում մակերեսի, գծային չափերի կամ երկրաչափական տեսքի անհամապատասխանությունները, իսկ որակական սխալների շարքին են դասվում նպատակային կամ գործառնական նշանակության, ինչպես նաև սեփականության սուբյեկտի վերաբերյալ ոչ ճիշտ տվյալները: Սխալների ուղղման հիմք կարող են հանդիսանալ իրավահաստատող փաստաթղթերը, չափագրման տվյալները, հարևանների համաձայնությունները կամ Կադաստրի կոմիտեի նախաձեռնած վարչական վարույթը: Ծառայությունների արդյունավետ կազմակերպման նպատակով նախագծով ընդլայնվում են նաև որակավորված անձանց՝ չափագրողների լիազորությունները:

«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին **ՀՕ-305-Ն, «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին** **ՀՕ-306-Ն (ընդունված՝ 03.07.2026 թ., ուժի մեջ՝ 15.07.2026թ.)**

- Առանցքային բովանդակային նորույթը Եվրոպական միության Առևտրի վերահսկման և փորձագիտական (TRACES) համակարգում տնտեսավարողների գրանցման պարտադիր պահանջի և ընթացակարգերի սահմանումն է, ինչը պայմանավորված է Հայաստանի կողմից 2025 թվականի մարտից ստացված ձկնամթերքի արտահանման թույլտվությամբ:
- Փոփոխություններով Կառավարությանը լիազորություն է վերապահվում հաստատել համակարգում գրանցվելու, գրանցումը դադարեցնելու և արտահանման համար անհրաժեշտ առողջության սերտիֆիկատների տրամադրման կարգն ու պահանջները: Գործնական առումով սահմանվում է հստակ մեխանիզմ, ըստ որի՝ TRACES համակարգում գրանցվելու համար տնտեսավարողը պետք է դիմի Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, որից հետո իրականացվում է պարտադիր ստուգում՝ ԵՄ չափանիշներին համապատասխանությունը պարզելու համար:

ՀՀ Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-310-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 26.07.2026թ.)

- Հստակեցվում և սահմանվում են ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման առանցքային հասկացությունները դրանց միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով: Նաև, ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման իրականացումը վերապահվում է հարկային մարմինն՝ ընդլայնելով նաև թեմատիկ հարկային ստուգումների շրջանակը: Պատասխանատվություն է նախատեսվում հաշվետերերի և վերահսկող անձանց համար՝ կեղծ, թերի կամ պարտադիր տեղեկություններ չներկայացնելու դեպքերում:
- Երկարաձգվում է հարկային մարմին տեղեկությունների ներկայացման ժամկետը: Հստակեցվում են ֆինանսական հաստատությունների կողմից փաստաթղթերի և տեղեկատվության պահպանման պահանջները՝ սահմանելով դրանց պահպանման նվազագույն հնգամյա ժամկետը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և այլ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-321-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 01.01.2027թ.)

- Հետադարձ հիփոթեքը որպես բնակելի տան, բնակարանի, այգետնակի կամ ամառանոցի գրավի հատուկ տեսակ: Հետադարձ հիփոթեքի պայմանագրի հիման վրա բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավորվում է հետադարձ հիփոթեքի պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով պարբերական ամենամսյա վճարումների ձևով կամ պայմանագրում նշված նպատակի համար դրամական միջոցներ տրամադրել գրավատուին Կենտրոնական բանկի սահմանած հատուկ բանկային հաշվի միջոցով, իսկ գրավատուն՝ օրենքով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի տարիքի հասած, անշարժ գույքի՝ բնակարանի, բնակելի տան, այգետնակի կամ ամառանոցի սեփականատերը, պահպանելով համապատասխան գույքի նկատմամբ սեփականության և օգտագործման իր իրավունքները, իր գույքը ծանրաբեռնում է հետադարձ հիփոթեքով:
- Հետադարձ հիփոթեքի պայմանագիրը պետք է ունենա անբաժանելի մաս կազմող հավելված, որտեղ պետք է նկարագրվի պայմանագիր կնքելու պահին անշարժ գույքի փաստացի վիճակի տվյալները: Պայմանագիրը կնքվում է անժամկետ և դադարում է գրավատուի մահվան, գույքի օտարման կամ պարտավորությունների ամբողջական մարման դեպքում:

«Դեղերի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-343-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 27.07.2026թ.)

- Հստակեցվում են դեղերի արտադրության, ներմուծման, բաշխման և շրջանառության ոլորտում կիրառվող մի շարք կարգավորումներ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը հարակից օրենսդրությանը:
- Միաժամանակ, նախատեսվում է բարելավել դեղերի ներմուծման և զուգահեռ ներմուծման ընթացակարգերը, վերանայել ներմուծման հավաստագրի տրամադրումը մերժելու հիմքերը, ընդլայնել վերապիտակավորման հնարավորությունները և ապահովել բնակչության համար կենսական նշանակության, այդ թվում՝ հիմնական և ուռուցքաբանական դեղերի առավել հասանելիությունը:
- Նախատեսվում է նաև սահմանել դեղագործական արտադրանքի պահպանություն իրականացնող մաքսային պահեստների և այլ սուբյեկտների լիցենզավորման ու հավաստագրման պարտադիր պահանջներ՝ դեղերի որակի և անվտանգության ապահովման նպատակով:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-331-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 18.07.2026թ.)

- Սահմանվել են ինքնակամ կառույցների օրինականացման նոր կարգավորումներ և զգալիորեն բարձրացվել են դրանց համար գանձվող տեղական տուրքերը: Նախատեսվում է ինքնակամ կառույցների օրինականացման ևս մեկ հնարավորություն ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ինքնակամ կառույցների համար, որոնք կարող են կառուցված լինել նաև օրենքով սահմանված ժամկետից հետո: Ընդ որում, երկարաձգվել է սեփականության հողամասերում առկա ամբողջությամբ ինքնակամ կառույցների հաշվառման և Կադաստրի կոմիտե փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը:
- Տուրքի չափը Երևան քաղաքի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի համար սահմանվել է նախագծման թույլտվության տեղական վճարի եռաթափատիկի, շինարարության թույլտվության տեղական տուրքի եռապատիկի հանրագումարի և 100 միլիոն դրամի չափով: Այլ մարզերում տուրքի չափը սահմանվել է նույն հաշվարկային բանաձևով (տեղական վճարի և տուրքի եռապատիկների հանրագումար) և 50 միլիոն դրամի չափով:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-344-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 01.01.2027թ.)

- Նախատեսվում է սահմանել, որ օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը տրամադրվելու է անժամկետ: Բացի այդ, հարկային մարմինը իրականացնելու է օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների գործունեության մշտադիտարկում՝ եռամսյակային կտրվածքով, նպատակ ունենալով ապահովելու հարկ վճարողի շարունակական օրինապահ վարքագծի դրսևորումը: Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների սպասարկումն իրականացվում է առաջնահերթ և արտոնյալ պայմաններով՝ այդ նպատակով հավաստագրի տրամադրման օրվանից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնի ղեկավարի հրամանով նշանակելով նաև անհատական սպասարկման մասնագետ:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-349-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 23.07.2026թ.)

- Նախատեսվում է, որ գովազդային վիճակախաղի կազմակերպիչ կարող է հանդիսանալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որն իր ծառայությունները, աշխատանքները կամ ապրանքները գովազդելու նպատակով կազմակերպում է գովազդային վիճակախաղ, որի մրցանակային ֆոնդը ձևավորվում է բացառապես կազմակերպչի սեփական միջոցների հաշվին և արտահայտված է իրային (բնամթերային) ձևով:
- Սահմանվել է նաև, որ գովազդային վիճակախաղի կազմակերպման և իրականացման գործընթացը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կամ պետական հաշվառում չստացած անձանց պատվիրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր խախտման համար 10 միլիոն դրամի չափով:

Բանկերի վերակառուցման մասին և մի շարք հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-363-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 01.01.2027թ.)

- Օրենքը կարգավորում է Հայաստանում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի վերակառուցման գործընթացը: Դրա հիմնական նպատակներն են ֆինանսական համակարգի կայունության ապահովումը, ձախողվող բանկի կրիտիկական գործառնությունների անընդհատության պահպանումը և պետական միջոցների պաշտպանությունը:

- Գործընթացի առանցքային սկզբունքն այն է, որ վերակառուցման արդյունքում առաջացած վնասները կրում են բանկի բաժնետերերն ու պարտատերերը, սակայն ավանդների հատուցումը երաշխավորող օրենքով սահմանված չափով ավանդները մնում են լիովին պաշտպանված: Եթե որևէ մասնակից կամ պարտատեր վերակառուցման արդյունքում կրի ավելի մեծ վնաս, քան կկրեր բանկի լուծարման դեպքում, վնասը փոխհատուցվում է («no creditor worse off» երաշխիք): Վերակառուցման բացառիկ լիազորությունը վերապահվում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր բանկի համար մշակելու է վերակառուցման ծրագիր և իրավունք է ունենալու բանկից պահանջել վերացնել հնարավոր վերակառուցմանը խոչընդոտող հանգամանքները, օրինակ՝ որոշակի գործունեության սահմանափակումը:
- Բանկը վերակառուցվում է 3 հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում. 1.բանկը ձախողվել է կամ հավանական է, որ կձախողվի. 2.ողջամիտ ժամկետում հնարավոր չէ վերացնել ձախողման հիմքերը բանկի, մասնակիցների կամ Կենտրոնական բանկի միջոցառումներով, 3.վերակառուցումն անհրաժեշտ է վերակառուցման նպատակներից որևէ մեկի ապահովման համար: Վերակառուցման համար նախատեսվում են հատուկ գործիքներ, որոնք Կենտրոնական բանկը կարող է կիրառել առանց բաժնետերերի կամ հաճախորդների համաձայնության: Դրանք ներառում են բանկի կամ դրա մի մասի վաճառքը երրորդ անձանց, «կամուրջ բանկի» ստեղծումը՝ բանկի կրիտիկական ծառայությունների մատուցումը շարունակելու համար, և ակտիվների առանձնացումը հատուկ վարկային կազմակերպության միջոցով՝ դրանց իրացումից առավելագույն միջոցներ ստանալու նպատակով:
- Գործընթացը ֆինանսավորելու համար ստեղծվում է Վերակառուցման հիմնադրամ, որի միջոցները ձևավորվում են բանկերի կողմից վճարվող միանվագ և պարբերական վճարներից:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-385-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 01.01.2027թ.), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-386-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 30.07.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվել է ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկով հարկման առանձին բազա, չցուցակված (առևտրին չթույլատրված) բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների համար շահութահարկի 15 տոկոս դրույքաչափով:

- Ֆիզիկական անձանց մասով ևս բանկը որպես հարկային գործակալ վերոնշյալ բաժնետոմսերի մասով շահաբաժին վճարելիս եկամտային հարկը պահելու է 15 տոկոս դրույքաչափով: Ընդ որում, տվյալ բանկի թողարկած բաժնետոմսերից բաժնետիրոջ կողմից ստացվող շահաբաժինները համարվում են ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժիններ նաև այն դեպքում, երբ շահաբաժինը ստացող բաժնետիրոջը պատկանող՝ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում ցուցակված տվյալ բանկի բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը շահաբաժինների բաշխման (վճարման) օրվա դրությամբ գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքի մեկ տոկոսը:
- «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանվել է շահաբաժինների 15 տոկոսի չափով պետական տուրք՝ բանկերի թողարկած և Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված (առևտրին չթույլատրված) բաժնետոմսերի մասով հետևյալ գործողությունների համար՝
 1. բանկերի կողմից ֆիզիկական անձ համարվող բաժնետերերին շահաբաժին վճարելու համար,
 2. բանկերի կողմից իրավաբանական անձ համարվող բաժնետերերին շահաբաժնի բաշխման մասին որոշում ընդունելու համար:
- Օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի փետրվարի 1-ից և տարածվում է նաև մինչև 2027 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով բաշխվող կամ վճարվող շահաբաժինների վրա: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» օրենքի փոփոխությունները ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում են մինչև 2027 թվականի հունվարի 31-ը ներառյալ շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման կամ շահաբաժինների վճարման մասով:
- Նախատեսվում է ներդնել մեկ միասնական էլեկտրոնային համակարգ, որտեղ կհաշվառվեն ֆիզիկական և իրավաբանական անձանց բոլոր գումարային պարտավորությունները (հարկեր, տուրքեր, տույժեր) համայնքի հանդեպ:
- Սահմանվել են ավտոկայանատեղի տեղական վճարի նոր առավելագույն սահմանաչափեր, օրինակ՝ 1 ժամվա համար մինչև 1,000 դրամ, իսկ 1 տարվա համար՝ մինչև 1,000,000 դրամ: Մեկ ժամվա համար վճարի դեպքում կիրառվելու է րոպեների հաշվարկման մեթոդը:
- Բացարձակ արգելվում է գովազդի տեղադրումը թանգարաններում, հուշարձանների ներսում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերում:
- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկային և ոչ հարկային պարտավորությունների գանձման վարույթներն այսուհետ իրականացվելու են գրավոր ընթացակարգով: Լսված լինելու իրավունքն ապահովվելու է երկշաբաթյա ժամկետում գրավոր դիրքորոշում ներկայացնելու միջոցով: Նշված պարտավորությունների մասով վարչական վարույթի առավելագույն ժամկետը սահմանվել է 60 օր:
- Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված լրացմամբ՝ դատարաններն այլևս չեն կարող կիրառել հայցի ապահովման միջոց, որը կարգելի համայնքային կամ պետական հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների քանդումը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-387-Ն (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 30.08.2026թ.)

- Հստակեցվել են Երևանի ավագանու և քաղաքապետի լիազորությունների շրջանակը: Ավագանուն վերապահվել են լայն լիազորություններ՝ սահմանելու առևտրի, տրանսպորտի, շրջակա միջավայրի և հանրային տարածքների օգտագործման լրացուցիչ պայմաններ ու սահմանափակումներ:

ՀՈՒՆԻՍ ԱՄՍԻՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ*

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-178-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 01.07.2026թ.)

- Սահմանվել են նոր հասկացություններ, օրինակ՝ հեռակա պայմանագիր, ձեռնարկության շենքից դուրս կնքված պայմանագիր, թվային բովանդակություն, թվային ծառայություն և թվային տարր պարունակող ապրանք եզրույթները:
- Նախատեսվում են նոր կարգավորումներ ապրանքի համապատասխանության վերաբերյալ: Ներքոգրյալ կարգավորումները տարածվում են միայն այն առք ու վաճառքի պայմանագրերի վրա, որոնք վերաբերում են շարժական գույքին, սահմանափակ ծավալով իրացման համար նախատեսված ջրին, գազին և էլեկտրաէներգիային, սպառողի կամ ծառայության այլ օգտատերերի կողմից վերբեռնվող կամ ստեղծվող էլեկտրոնային տեսքով տվյալների հետ կիսվելու կամ այլ փոխգործակցության հնարավորություն տվող ծառայություններին: Մասնավորապես, վաճառողի կողմից հանձնվող ապրանքը պետք է՝
 1. համապատասխանի ապրանքի նկարագրությանը, տեսակին, քանակին, որակին, ֆունկցիոնալությանը, համատեղելիությանը, փոխգործունակությանը և այլ հատկանիշների վերաբերող պայմաններին,
 2. համապատասխանի այն նպատակներին, որոնց մասին սպառողը տեղեկացրել է վաճառողին մինչև պայմանագրի կնքումը, և որոնց վերաբերյալ վաճառողի կողմից տրվել է համաձայնություն,
 3. պետք է առաքվի պայմանագրով նախատեսված բոլոր պարագաներով և հրահանգներով:
- Առանձին նախատեսվում են նաև հեռակա և ձեռնարկության շենքից դուրս կնքվող պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության պահանջները, որի համաձայն վաճառողը պարտավոր է առավելագույն դյուրին եղանակով մինչև պայմանագրի կնքումը, վերոնշյալ տեղեկություններից բացի, սպառողին տրամադրել էլեկտրոնային ձևով լրացվող հաղորդագրության հետ կապակցված տվյալների օգտագործման կարգը:
- Նախատեսվում է սպառողի իրավունքը՝ առանց որևէ պատճառաբանության հրաժարվելու հեռակա կամ ձեռնարկության շենքից դուրս կնքված պայմանագրերից 14 օրվա ընթացքում՝ ըստ օրենքով նախատեսված հաշվարկման ժամկետների:

- Հակաձև փոփոխություններից է նաև սպառողների հետ կնքվող միանալու պայմանագրերին ներկայացվող պահանջների շրջանակը: Միանալու պայմանագրերում կամ պայմանագրի ընդհանուր պայմաններում չեն կարող ներառվել այնպիսի պայմաններ, որոնցով՝
 1. սպառողը պարտավորվում է կատարել այնպիսի գործողություններ, որոնց ծանոթանալու հնարավորություն չի ունեցել նախքան պայմանագրի կնքելը.
 2. արտադրողին (վաճառողին) իրավունք է վերապահվում առանց հիմնավոր պատճառի փոփոխելու տրամադրվող ապրանքի ցանկացած բնութագիրը.
 3. արտադրողին իրավունք է վերապահվում միակողմանի լուծելու պայմանագիրն այն դեպքում, երբ այդ իրավունքը նախատեսված չէ.
 4. սպառողի համար.
 5. արտադրողին իրավունք է վերապահվում ապրանքի գինը որոշելու կամ փոփոխելու մատակարարման պահին առանց սպառողին պայմանագրից հրաժարվելու իրավունք տալու.
 6. արտադրողին իրավունք է վերապահվում պայմանագրով ստանձնած իր իրավունքներն ու պարտականություններն այլ անձի փոխանցելու այն դեպքում, երբ դա կարող է սպառողի համար առաջացնել երաշխիքների նվազեցում, և սպառողը չի տվել իր համաձայնությունը.
 7. արտադրողին իրավունք է վերապահվում սպառողի՝ պայմանագրով ստանձնած իր պարտականությունների չկատարման դեպքում պահանջելու պայմանագրի գնի համեմատ անհամաչափ բարձր փոխհատուցում.
 8. սպառողի համար պայմանագիրը պարտադիր է դառնում այն դեպքում, երբ արտադրողի պարտավորությունների կատարումը պայմանավորվում է այնպիսի հանգամանքով, որն ամբողջությամբ կախված է արտադրողի կամքից.
 9. արտադրողին իրավունք է վերապահվում միակողմանի մեկնաբանելու պայմանագրի պայմանները.
 10. սահմանափակվում է արտադրողի՝ վերջինիս ներկայացուցիչների կողմից սպառողի հանդեպ ստանձնած պարտավորության կատարումը,
 11. սահմանափակվում է սպառողի՝ պայմանագրի լուծման իրավունքն այն դեպքում, երբ արտադրողը չի կատարում իր պարտավորությունները,
 12. սահմանափակվում է արտադատական, դատական կամ օրենքով սահմանված այլընտրանքային պաշտպանության սպառողի իրավունքը:

*Սույն բաժինը ներառում է այն օրենքները, որոնք ընդունվել են ավելի վաղ, սակայն ուժի մեջ են մտնում հուլիս ամսին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի գնահատման անհրաժեշտությունը կամ հնարավորությունը օրենքով նախատեսված լինելու դեպքերում բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի գնահատումն իրականացնող անձանց առաջադրվող չափանիշները սահմանելու մասին **N 970-Ն** (ընդունված՝ 02.07.2026թ., ուժի մեջ՝ 04.07.2026թ.)

- Որոշումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից և սահմանում է այն սուբյեկտների շրջանակը, որոնք իրավասու են իրականացնել արժեթղթերի գնահատում, երբ դա նախատեսված է օրենքով:
- Գնահատողը պետք է հանդիսանա աուդիտորական կազմակերպություն, որի՝ գնահատմանը նախորդող տարվա գործունեության արդյունքներով աուդիտորական ծառայություններից ստացված հասույթը գերազանցել է 250 մլն դրամը:
- Նախատեսվում է, որ գնահատողը գնահատմանը նախորդող 3 տարիների ընթացքում չպետք է ծառայություն մատուցած լինի գնահատման պատվեր տվողին կամ այն ընկերությանը, որի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքը գնահատվելու է՝ ներառյալ դրանց բաժնետերերին կամ մասնակիցներին:

ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1355-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին N 952-Ն (ընդունված՝ 02.07.2026թ., ուժի մեջ՝ 03.07.2026թ.)

- Սահմանվել են հատուկ ընթացակարգեր՝ հանրության գերակա շահերի համար օտարվող սեփականության շուկայական արժեքի որոշման համար: Գերակա շահերի ապահովման նպատակով օտարման դեպքերում գույքի տեղազննությունն իրականացվում է պարտադիր կարգով, իսկ արդյունքները ձևակերպվում են օրենքով սահմանված նկարագրության արձանագրության հիման վրա:
- Նախատեսվում է, որ շուկայական արժեքը որոշելիս հաշվի չեն առնվում և չեն գնահատվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված ինքնակամ շենքերը կամ շինությունները: Վթարային բազմաբնակարան շենքերում բնակելի տարածքների (առանց հողամասի) արժեքը որոշվում է նույն գոտում գտնվող համանման ոչ վթարային գույքի արժեքը 30 տոկոսով նվազեցնելով:
- Փոփոխություններով գնահատողներին արգելվում է կնքել գնահատման ծառայությունների արժեքի վերաբերյալ նախնական համաձայնություններ կամ դրսևորել այլ հակամրցակցային վարքագիծ:

«Ֆոնդային բորսաների ցանկը սահմանելու մասին» **N 1079-Ն** (ընդունված՝ 23.07.2026 թ., ուժի մեջ՝ 24.07.2026)

- Որոշմամբ սահմանվում է այն ֆոնդային բորսաների ցանկը, որոնցում չցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների նկատմամբ կիրառվելու են Հարկային օրենսգրքով և «Պետական տուրքի մասին» օրենքով նախատեսված կանոնները:
- Որոշման ընդունումը պայմանավորված է Հարկային օրենսգրքում և «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված օրենսդրական փոփոխություններով, որոնցով վերանայվել են բանկերի կողմից թողարկված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների հարկման կանոնները:
- Հավելվածում ֆոնդային բորսաները դասակարգված են ըստ երկրների (միության) քաղաքի, անվանման և MIC ծածկագրի:

Հօգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի կնքված պայմանագրերի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից օրենսդրությամբ չնախատեսված վճարներ գանձելու դեպքում վճարները վերադարձնելու կարգը սահմանելու մասին N 980-Ն (ընդունված՝ 02.07.2026թ., ուժի մեջ՝ 04.07.2026թ.)

- Սահմանվում է Առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում բժշկական կազմակերպությունների կամ դեղատների կողմից անձից գանձված, սակայն օրենսդրությամբ չնախատեսված վճարների վերադարձման ընթացակարգ: Կարգը տարածվում է 01.01.2026 թվականից ծագած հարաբերությունների վրա: Վճարները ենթակա են վերադարձման, եթե առկա է «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով նախատեսված մարմնի որոշումը ապահովագրական հատուցման պահանջը բավարարելու մասին կամ անձի և հիմնադրամի միջև կնքված հաշտության համաձայնությունը:
- Բժշկական օգնություն իրականացնողը կամ դեղատունը, դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո, մերժման հիմքերի բացակայության դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ փոխանցել գումարը դիմողի բանկային հաշվհամարին:

Տեխնիկական վիճակից ելնելով՝ բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը, շինությունները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու կարգը հաստատելու մասին N 982-Ն (ընդունված՝ 02.07.2026թ., ուժի մեջ՝ 13.07.2026թ.)

- Սահմանվել են շենքերը շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու հետևյալ հիմքերը.
 1. արտակարգ իրավիճակի կամ երկարատև ու ոչ պատշաճ շահագործման, ինչպես նաև երկարատև շահագործման հետևանքով շենքերի անմխիթար վիճակը (ֆիզիկական բարձր մաշվածության աստիճանը),
 2. շենքերի վերականգնման, ուժեղացման կամ վերակառուցման իրականացման համար անհրաժեշտ միջոցների՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի մայիսի 26-ի N 41-Ն հրամանով հաստատված մեթոդաբանությամբ սահմանված չափանիշներին չհամապատասխանելը:

ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 243-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին N 1087-Ն (ընդունված՝ 23.07.2026 թ., ուժի մեջ՝ 04.08.2026թ.)

- Լրացումներ են կատարվում ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 243-Ն որոշմամբ սահմանված՝ անշարժ գույքի պետական ռեգիստր էլեկտրոնային փաստաթղթերի ներկայացման կարգում: Փոփոխությունների արդյունքում «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված դեպքերում դատարաններին ևս վերապահվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 47.3-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը պետական գրանցում իրականացնող մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու իրավասություն:

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին N 1093-Ն (ընդունված՝ 23.07.2026 թ., ուժի մեջ՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգում համապատասխան գործիքակազմի տեղադրումից և գործարկումից հետո, սակայն ոչ ուշ, քան պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս անց)

- Առաջարկվում է լրացնել ՀՀ կառավարության 22.12.2011 թ. N 1851-Ն որոշմամբ հաստատված նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը: Մասնավորապես, նախատեսվում է ներառել բանկի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպության մասնակցությամբ կնքվող անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի խառը պայմանագրի, ինչպես նաև կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի և հիփոթեքի խառը պայմանագրի օրինակելի ձևերը:

ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի N 165-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1084-Ն (ընդունված՝ 23.02.2026թ., ուժի մեջ՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգում համապատասխան գործիքակազմի տեղադրումից և գործարկումից հետո, սակայն ոչ ուշ, քան պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս անց)

- Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են նախատեսվում գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման դիմումները և փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգում:
- Նախագծով նախատեսվում է, որ երրորդ անձի կողմից իրավունքի պետական գրանցման դիմում ներկայացնելու դեպքում դիմումին պետք է կցվի նաև դիմումատուի գրավոր համաձայնությունը: Միաժամանակ նոր խմբագրությամբ է շարադրվում իրավաբանական անձանց անունից էլեկտրոնային դիմումներ և փաստաթղթեր ներկայացնելու կարգը: Իրավաբանական անձի անունից կարող են հանդես գալ կայքէջում գրանցված՝ կանոնադրության կամ լիազորագրի հիման վրա գործող ֆիզիկական անձինք: Լիազորագրով հանդես գալու դեպքում էլեկտրոնային համակարգ պետք է վերբեռնվի նաև իրավաբանական անձի կողմից տրված լիազորագիրը՝ հաստատված դիմումը ներկայացնելու պահին առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից հանդես գալու իրավունք ունեցող գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- Առանձին ընթացակարգ է սահմանվում բանկերի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպությունների մասնակցությամբ անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակում կնքվող՝ նոտարական վավերացում չպահանջող խառը պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման համար: Խոսքը վերաբերում է կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի և հիփոթեքի խառը պայմանագրերին, ինչպես նաև անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի խառը պայմանագրերին, որոնք կնքվել են ՀՀ կառավարության հաստատած օրինակելի ձևերին համապատասխան:
- Նման պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման դիմումները և դրանց կից փաստաթղթերը կարող են ներկայացվել բացառապես համապատասխան բանկի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպության կողմից:

ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N 1134-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին N 1013-Ն (ընդունված՝ 09.07.2026 թ., ուժի մեջ՝ 10.07.2026 թ.)

- Վերանայվել են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հիմնական գործունեության առարկան, նպատակները և թույլատրելի ձեռնարկատիրական գործունեության տեսակները:
- Հստակեցվել են կազմակերպության փորձագիտական և հսկողական գործառույթները: Այն կարող է իրականացնել ատոմային էներգետիկայի, քիմիական, կենսաբանական կամ ֆիզիկական գործոնների աղբյուրներ ունեցող օբյեկտների, էկոլոգիական աղետի գոտիներում տեղակայվող օբյեկտների, նոր տեխնոլոգիաների, նախատեսվող գործունեության, հիմնադրության փաստաթղթերի և կառույցների նախագծերի փորձաքննություն և տրամադրել համապատասխան եզրակացություն՝ օրենքով նախատեսված դեպքերում:
- Որոշմամբ առանձին կարգավորվել են սննդային գործոնով պայմանավորված հիվանդություններին վերաբերող գործառույթները: Կազմակերպությունը կարող է գնահատել սննդամթերքի օգտագործման հետ կապված՝ մարդու առողջության վրա վնասակար ազդեցության ռիսկերը, իսկ վարակիչ հիվանդությունների առաջացման դեպքում՝ բացահայտել դրանց առաջացման և տարածման պատճառներն ու պայմանները:

Գետառողղատային տիպի հանքավայրերում ավազի, ավազակոպճային և ավազակոպճագլաքարային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման կարգը սահմանելու մասին N 1015-Ն (ընդունված՝ 09.07.2026 թ., ուժի մեջ՝ 10.07.2026 թ., բացառությամբ հավելվածի 12-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում՝ 07.10.2026 թ.)

- Նոր կարգավորմամբ արգելվում է սահմանային շերտում սահմանային գետերի հունից ավազի, ավազակոպճային կամ ավազակոպճագլաքարային խառնուրդի արդյունահանումը: Սահմանային գետերի ափերին գտնվող գետառողղատային տիպի հանքավայրերից արդյունահանումը նույնպես արգելվում է, սակայն, կարող է իրականացվել սահմանված լրացուցիչ պայմանների պահպանմամբ:
- Գետառողղատներում արդյունահանումը թույլատրվում է միայն ջրհոսքի բացակայության պայմաններում և գետերի միջվարարումների փուլում՝ տվյալ տարվա ընթացքում կուտակված վերականգնված պաշարների ծավալը, ինչպես նաև գետի հունի վիճակն ու կայունությունը փաստագրելուց հետո:

- Արդյունահանման աշխատանքները պետք է իրականացվեն այնպես, որ բացառվեն գետի բնական հունի փոփոխությունը, ափերի քայքայումը, ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումը, կամուրջների, ջրառի կետերի, գետի հունի արգելապատնեշների և այլ հիդրոտեխնիկական կամ ինժեներական կառույցների անվտանգ շահագործման ու կառուցվածքային կայունության վրա բացասական ազդեցությունը, արդյունահանման նախագծով սահմանված առավելագույն թույլատրելի խորության գերազանցումը:
- Կարգի 12-րդ կետով (ուժի մեջ է մտնում՝ 07.10.2026 թ.) սահմանվել է նաև, որ գետերի հունների արգելապատնեշների կառուցման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվություն ունեցող անձինք պարտավոր են արդյունահանման աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնել լիազոր մարմնին և տեսչական մարմնին՝ ներկայացնելով աշխատանքների մեկնարկի օրը, տևողությունը և նախատեսվող արդյունահանման ծավալները:

Սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքերակումներում և հանքավայրերում ընդերքօգտագործում իրականացնելու վերաբերյալ համաձայնությունների տրամադրման կարգը հաստատելու մասին N 1027-Ն (ընդունված՝ 09.07.2026 թ., ուժի մեջ՝ համապատասխան թվային հարթակի գործարկման օրվանից)

- Որոշմամբ սահմանվել է, որ սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքերակումներում ու հանքավայրերում ընդերքօգտագործումը թույլատրվում է միայն ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության ոլորտների լիազորված մարմինների, իսկ մաքսային հսկողության գոտում՝ նաև մաքսային մարմնի գրավոր համաձայնությունների առկայության դեպքում:
- Համաձայնություն ստանալու համար իրավաբանական անձը համապատասխան մարմիններին ներկայացնում է դիմում՝ ներառելով նախատեսվող ընդերքօգտագործման աշխատանքների, ժամկետների, ծավալների, հանքավայրի տեղադիրքի և կոորդինատների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև առավելագույնը 10 օրվա վաղեմությամբ գեոդեզիական չափագրումներով հատակագիծ:

Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում բռնուսային միավորների հաշվարկման, գործակիցների կիրառման և դրանց միջոցով վճարումներ կատարելու կարգը հաստատելու մասին N 1019-Ն (ընդունված՝ 09.07.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2029 թ.)

- Սահմանվել է առողջության համընդհանուր ապահովագրության համակարգում ապահովագրված անձանց առողջ ապրելակերպը խրախուսող բռնուսային միավորների հաշվարկման, դրանց նկատմամբ լրացուցիչ գործակիցների կիրառման և բռնուսային միավորներով վճարումներ կատարելու կարգը:
- Բռնուսային միավորներ են հաշվարկվում, եթե օրացուցային տարվա ընթացքում ապահովագրված անձի անունով, կանխարգելիչ ծառայություններից բացի, այլ ապահովագրական հատուցում չի գրանցվել: Միավորները կուտակվում են առողջության համընդհանուր ապահովագրության վկայագրին կից բռնուսային հաշվում, իսկ մեկ բռնուսային միավորը համարվում է մեկ դրամի:
- Բռնուսային միավորները հաշվարկվում են յուրաքանչյուր օրացուցային տարվա արդյունքներով և անձի հաշվին փոխանցվում հաջորդ տարվա առաջին աշխատանքային օրը: Դրանց հաշվարկման համար ապահովագրված անձը պետք է համաձայնություն տա, որպեսզի հիմնադրամին հասանելի լինեն անհրաժեշտ բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները:
- Բռնուսային միավորների նկատմամբ լրացուցիչ գործակիցներ կարող են կիրառվել, եթե ապահովագրված անձը կամավոր և անհատույց արյան դոնոր է եղել, կամ նրա մոտ արձանագրվել են առողջ ապրելակերպին ուղղված բարելավվող ցուցանիշներ, այդ թվում՝ մարմնի զանգվածի ինդեքսի նորմավորում, ծխելուց կամ ալկոհոլային խմիչքների օգտագործումից հրաժարում: Յուրաքանչյուր տարվա համար հաշվարկված վերջնական բռնուսային միավորները չեն կարող գերազանցել անձի տարեկան ապահովագրավման 10 տոկոսը:
- Կուտակված բռնուսային միավորները կարող են օգտագործվել ապահովագրավման ինքնուրույն վճարող անձանց ապահովագրավման վճարման համար, կամավոր առողջության ապահովագրության փաթեթներ ձեռք բերելու համար, մարգասրահների կամ լողավազանների բաժանորդային վճարների համար, առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում համավճարներ կատարելու համար, ապահովագրությամբ չհատուցվող բժշկական օգնության և սպասարկման դիմաց վճարելու համար:

ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ և ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 19-ի N 307-Լ որոշումներում փոփոխություն 7 լրացում, ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1562-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին N 991-Լ (ընդունված՝ 09.07.2026, ուժի մեջ՝ 10.07.2026)

- Սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022–2027 թվականների ծրագրում ավելացվել է նոր երաշխիք, ըստ որի՝ պետական աջակցության շրջանակում տրամադրված ֆինանսական աջակցությունը, այդ թվում՝ 100 տոկոսով սուբսիդավորվող հիփոթեքային վարկով կառուցված անշարժ գույքը, հիփոթեքային վարկի գործողության ամբողջ ընթացքում չի կարող արգելադրվել, բռնագանձվել կամ հաշվանցվել շահառուի այլ պարտավորությունների դիմաց: Որոշմամբ նախատեսվել է նաև, որ այս կարգավորումը ունի հետադարձ ուժ և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Տվյալների դասակարգման համակարգի ստեղծման և կիրառման կարգը հաստատելու մասին N 1044-Ն (ընդունված՝ 16.07.2026 թ., ուժի մեջ՝ 17.07.2026 թ.)

- Որոշմամբ ստեղծվում է պետական տեղեկատվական համակարգերին աջակցող տվյալների դասակարգման միասնական համակարգ և հաստատվում դրա կիրառման կարգը, որի նպատակն է ապահովել պետական տեղեկատվական համակարգերում օգտագործվող տվյալների միասնական դասակարգումը, փոխգործունակությունը և անվտանգ տվյալների փոխանակումը:
- Սահմանվում է, որ պետական տեղեկատվական համակարգերում կիրառվող դասակարգիչները պարտադիր պետք է գրանցվեն պետական տեղեկատվական համակարգի կառավարչական համակարգում և համապատասխանեն միասնական տեխնիկական ու միջազգային ստանդարտներին: Կարգավորվում են դասակարգիչների ստեղծման, գրանցման, փոփոխման, թարմացման, չեղարկման և օգտագործման ընթացակարգերը, ինչպես նաև դասակարգիչների պատասխանատուների և Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի լիազորությունները:
- Միաժամանակ սահմանվում են դասակարգիչների տեխնիկական պահանջները, դրանց նկարագրությանը ներկայացվող պարտադիր տվյալները, XML ձևաչափով հասանելիության ապահովման, պետական տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի միջոցով օգտագործման, ինչպես նաև միջազգային ստանդարտներին համապատասխան մշակման և վարման պահանջները:

Պետական տեղեկատվական համակարգի կառավարչական համակարգը ստեղծելու և դրա կիրառման կարգը հաստատելու մասին N 1039-Ն (ընդունած՝ 16.07.2026 թ., ուժի մեջ՝ 16.07.2026 թ.)

- Որոշմամբ ստեղծվում է պետական տեղեկատվական համակարգի (ՊՏՀ) կառավարչական համակարգը և սահմանվում դրա կիրառման կարգը, որի նպատակն է ապահովել պետական տեղեկատվական համակարգերի միասնական կառավարումը, տվյալների շտեմարանների գրանցումը, փոխգործելիությունը և վերահսկողությունը:
- Կարգավորվում են տվյալների շտեմարանների ստեղծման, փոփոխման, գրանցման և դադարեցման ընթացակարգերը, դրանց հաստատման գործընթացը, ինչպես նաև ՊՏՀ կառավարչական համակարգում վարվող ենթառեգիստրների, տվյալների կազմի և կառավարման պահանջները: Միաժամանակ սահմանվում են տվյալների շտեմարանների կառավարչի, մշակողի, ինքնավար մարմնի, անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի և Կադաստրի կոմիտեի լիազորությունները:
- Անցումային դրույթներով նախատեսվում է, որ մինչև «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված տվյալների շտեմարանների փաստաթղթերը պետք է պատրաստվեն մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը, իսկ համապատասխան տվյալները ՊՏՀ կառավարչական համակարգ մուտքագրվեն մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը:

Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության երկրներ ձկան կամ ձկնամթերքի արտահանման նպատակով Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում տնտեսավարող սուբյեկտի գրանցման, գրանցումը դադարեցնելու և առողջության սերտիֆիկատ տալու կարգը հաստատելու մասին N 1060-Ն (ընդունված՝ 16.07.2026 թ., ուժի մեջ՝ 18.07.2026 թ.)

- Սահմանվում է Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության երկրներ ձկան և ձկնամթերքի արտահանման համար տնտեսավարողների՝ Եվրոպական միության Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում (TRACES) գրանցման, գրանցման դադարեցման և առողջության սերտիֆիկատի տրամադրման կարգը:
- ԵՄ երկրներ համապատասխան ապրանքների արտահանում կարող են իրականացնել միայն համակարգում գրանցված ձկնաբուծական տնտեսությունները, ձկնամթերք արտադրող կամ պահպանող կազմակերպությունները: Եթե արտահանումն իրականացնում է պահպանող կազմակերպությունը, համակարգում պետք է գրանցված լինի նաև ձուկը կամ ձկնամթերքն արտադրած տնտեսությունը կամ կազմակերպությունը:

- Գրանցումն իրականացնում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը: Տնտեսավարողը ներկայացնում է դիմում և իր գործունեությանը համապատասխան փաստաթղթեր: Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո տնտեսավարողի մոտ իրականացվում է ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ նաև արտադրանքի նմուշառում և լաբորատոր փորձաքննություն:
- Անհամապատասխանությունների բացակայության դեպքում Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը տնտեսավարողի տվյալները գրանցում է TRACES համակարգում և ներկայացնում Եվրոպական հանձնաժողովի հաստատմանը: Եվրոպական հանձնաժողովի հաստատումից հետո գրանցումը համարվում է ավարտված և տրամադրվում է գրանցման համար, իսկ գրանցումն անժամկետ է:
- Գրանցված տնտեսավարողները ենթակա են ստուգման տարեկան առնվազն մեկ անգամ: Հայտնաբերված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում գրանցումը դադարեցվում է, և տնտեսավարողը հանվում է համակարգից:

ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 6-ի N 1785-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N 1061-Լ (ընդունված՝ 16.07.2026թ., ուժի մեջ՝ 16.07.2026թ.)

- Կառավարությունը փոփոխել է պետություն-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ) ծրագրերի գծով պայմանական պարտավորությունների հաշվարկման և գնահատման գործող մեթոդաբանությունը:
- Նոր կարգով նախատեսվում է, որ մինչև պետության կամ համայնքի համար պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրի կնքումը դրա նախագիծը ներկայացվելու է լիազոր մարմնին՝ նախնական գնահատման նպատակով: Գնահատման ընթացքում վերլուծվելու են պայմանագրից բխող ֆիսկալ ռիսկերը, պայմանական պարտավորությունների հնարավոր ծավալը, դրանց նյութականացման հավանականությունը և պետական ֆինանսների վրա հնարավոր ազդեցությունը:
- Փաստաթուղթը նաև սահմանում է պայմանական պարտավորությունների նույնականացման և դասակարգման միասնական մոտեցումներ: Մասնավորապես, գնահատվելու են պետական երաշխիքները, նվազագույն եկամտի ապահովման պարտավորությունները և այլն:
- Ներդրվում է պայմանական պարտավորությունների միասնական ռեեստր, նախատեսվում է պայմանագրերի պարբերական մշտադիտարկում և վերագնահատում, ինչպես նաև ռիսկերի կառավարման ծրագրի կազմման պահանջ:

Պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով Հայաստանի Հանրապետությունից բեռնատար տրանսպորտային միջոցների՝ առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու մեկնման դեպքերը, առանձին բեռնատար տրանսպորտային միջոցների՝ կուտակային կայանատեղիներից բացթողնման առաջնահերթությունները, կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողների՝ հերթերի կառավարման համակարգին միանալու կարգը, կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեության իրականացման պահանջները, կուտակային կայանատեղիներում հերթագրման ծառայության վճարի առավելագույն չափը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի այն ավտոմոբիլային անցման կետերը սահմանելու մասին, որտեղից բեռնատար տրանսպորտային միջոցների մեկնումը Հայաստանի Հանրապետությունից կարող է իրականացվել միայն կուտակային կայանատեղի մուտք և ելք գործելուց հետո N 1090-Ն որոշում (ընդունված՝ 23.07.2026 թ., ուժի մեջ՝ 03.08.2026թ.)՝ որոշ բացառություններով)

- Սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունից մեկնող բեռնատար տրանսպորտային միջոցների մուտքը «Բագրատաշեն» և «Ագարակ» պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետեր իրականացվելու է միայն համապատասխան կուտակային կայանատեղի մուտք և ելք գործելուց հետո: Միաժամանակ սահմանվում է, որ հերթագրման ծառայության վճարը մեկ բեռնատար տրանսպորտային միջոցի համար չի կարող գերազանցել 5 000 դրամը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
- Սահմանվում են նաև այն դեպքերը, երբ բեռնատար տրանսպորտային միջոցները կարող են պետական սահմանը հատել առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու: Այդպիսի դեպքեր են, մասնավորապես, մարդասիրական և տեխնիկական օգնության, ռազմական նշանակության արտադրանքի, ռադիոակտիվ կամ պայթուցիկ նյութերի, կենդանի կենդանիների, դիվանագիտական բեռների, ինչպես նաև մեծ եզրաչափերով բեռների փոխադրումները: Որոշմամբ նախատեսվում են նաև կուտակային կայանատեղիներից առաջնահերթ բացթողնման կանոններ, որոնք վերաբերում են, մասնավորապես, արագ փչացող ապրանքներ, «Հատուկ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների և օրինապահ հարկ վճարողների բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցներին:

ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 4-ի N 800-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N 1115-Լ (ընդունված՝ 30.07.2026 թ., ուժի մեջ՝ 31.07.2026թ.)

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ տարածքից ջերմատնային արտադրության առանձին ապրանքների արտահանման աջակցության միջոցառման մեջ: Աջակցության միջոցառման գործողությունը երկարաձգվում է նաև 2026 թվականի օգոստոս ամսվա համար, իսկ փոխհատուցման ենթակա ապրանքների ցանկը լրացվում է պալերմո տեսակի պղպեղով և սմբուկով: 2026 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն արտահանված ապրանքների համար հաստատվել են փոխհատուցման չափերը:

ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 11-ի N 839-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N 1104-Լ (ընդունված՝ 30.07.2026 թ., ուժի մեջ՝ 31.07.2026թ.)

- Երկարաձգվում է ՀՀ տարածքից թարմ պտղի, սննդամթերքի և խմիչքի առանձին տեսակների արտահանման աջակցության միջոցառումը՝ փոխհատուցում նախատեսելով նաև 2026 թվականի օգոստոս ամսվա ընթացքում արտահանվող արտադրանքի համար: Միաժամանակ, աջակցություն է նախատեսվել նաև շշալցված խաղողի և պտղահատապտղային գինիների, հայկական բրենդիի կամ հայկական կոնյակի, բնական հանքային ջրի, չորացրած մրգերի և բանջարեղենի, ինչպես նաև իշխան և թառափ տեսակի ձկների արտահանման համար:

ՀՀ կառավարության 09.09.2010 թվականի N 1251-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին N 1116-Ն (ընդունված՝ 30.07.2026թ., ուժի մեջ՝ 31.07.2026 թ.)

- Որոշմամբ հնարավորություն է տրվում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ դիմում-հայտարարության հիման վրա 2023 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ խոտանված համարել և տրանսպորտային միջոցների պետական գրանցման ու հաշվառման էլեկտրոնային ռեգիստրի գործող հատվածից հանել փաստացի չհազործվող կամ այլևս գոյություն չունեցող առանձին տրանսպորտային միջոցներ:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

«Ամպային հաշվողական ծառայությունների գնման գործընթացի մեթոդաբանությունը և կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է սահմանել ամպային ծառայությունների գնման գործընթացի մեթոդաբանությունը և կարգը, ինչպես նաև լրացում է կատարվում ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգում՝ սահմանելով, որ ամպային ծառայությունների ձեռքբերումը իրականացվում է մեկ անձից գնման ընթացակարգով, ինչպես նաև սահմանվում են պատվիրատուների կողմից ամպային հաշվողական ծառայությունների ձեռքբերման առանձնահատկությունները և ամպային ծառայությունների ձեռքբերման թվային հարթակի գործունեության կարգը:

«Էլեկտրոնային առևտրի օպերատորների և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև տեղեկատվական փոխգործակցության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ էլեկտրոնային առևտրի օպերատորի էլեկտրոնային համակարգը պետք է ապահովի մատակարարի կողմից ստացված և (կամ) գնորդի կողմից մուտքագրված՝ հետևյալ տեղեկությունների և փաստաթղթերի ներկայացումը մաքսային մարմիններին՝
 1. էլեկտրոնային առևտրի ապրանքների մասով գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը.
 2. տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը.
 3. էլեկտրոնային առևտրի ապրանքի ձեռքբերման դիմաց կատարված վճարման վերաբերյալ փաստաթղթերը (առկայության դեպքում).
 4. էլեկտրոնային առևտրի հարթակի անվանումը.
 5. էլեկտրոնային առևտրի ապրանքներն ուղարկողի (վաճառողի) անվանումը (անունը, ազգանունը).
 6. էլեկտրոնային առևտրի ապրանքները ստացողի (գնորդի) անունը, ազգանունը.
 7. էլեկտրոնային առևտրի ապրանքները ստացողի (գնորդի) անձնագրային տվյալները.
 8. էլեկտրոնային առևտրի ապրանքները ստացողի (գնորդի) հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).
 9. առաքանու համարը, քաշը.
 10. ուղարկող երկրի և նշանակման երկրի անվանումը, և այլն:

Արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին հասանելիության ապահովման կարգը հաստատելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է ձևավորել միասնական ընթացակարգ, որի միջոցով պետական մարմինները կկարողանան ներկայացնել արհեստական բանականության նախագծեր, ստանալ անհրաժեշտ հաշվողական ռեսուրսներ և իրականացնել պետական քաղաքականության առաջնահերթություններից բխող նախաձեռնություններ:
- Միևնույն ժամանակ, նախատեսվում է նաև, որ «Ֆայրբլոք ԷյՍԿ» ՓԲԸ-ից ձեռք բերված բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին կարող են հասանելիություն ստանալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1966-Ն որոշմամբ սահմանված շահառու հանդիսացող սուբյեկտները:

«Էլեկտրոնային առևտրի ապրանքների առանձնացված հաշվառման վերաբերյալ հաշվետվության ձևը, հաշվետվության հայաստանի հանրապետության պետական եկամուտների կոմիտեին ներկայացման կարգը, ժամկետը և պարբերականությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է սահմանել էլեկտրոնային առևտրի օպերատորների կողմից մաքսային մարմիններ ներկայացվող հաշվետվության ձևը, դրանում պարունակվող տեղեկությունները և էլեկտրոնային առևտրի օպերատորների կողմից մաքսային մարմիններ հաշվետվությունների ներկայացման կարգը:
- Որոշման հաշվետվածում նախատեսվում է հաշվետվության ձևը: Նախատեսվում է, որ հաշվետվությունները օպերատորների կողմից ներկայացվում են կիսամյակային կտրվածքով:

«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով փոխադրման դեպքերն ու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով նախատեսվում է սահմանել էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ առանց «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման փոխադրման դեպքերը, էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ մաքսային տարածքից արտահանման կարգը, իրականացվող մաքսային գործառնությունները, և այլն:

«Էլեկտրոնային առևտրի օպերատորների շինություններին, տարածքներին (տարածքների մասերին) և (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին) ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է սահմանել էլեկտրոնային առևտրի օպերատորների տարածքներին, շինություններին, հրապարակներին ներկայացվող պահանջները:
- Նախատեսվում է, որ օպերատորի տարածքները պետք է սարքավորված լինեն այնպես, որ ապահովվի օպերատորի տարածքներում էլեկտրոնային առևտրի ապրանքների պահպանումը, բացառվեն կողմնակի անձանց մուտքը, այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև ապահովվի միայն էլեկտրոնային առևտրի ապրանքների պահպանության գործունեության իրականացումը: Պահանջների պահպանման հավաստումն իրականացվում է իրավաբանական անձանց կողմից օպերատորների ռեեստրներում գրանցվելու համար դիմումի ներկայացման ժամանակ, ինչպես նաև տարեկան պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտը: Օպերատորների կողմից ռեեստրում ներառման նպատակով օպերատորի պահեստի ընդհանուր մակերեսը պետք է լինի առնվազն 600 քառ. մետր:

ՀՀ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման, ներմուծման, բաշխման ծառայությունների կազմակերպման կարգը հաստատելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի Հայաստանի Հանրապետությունում պետության կարիքների կամ առանձին հիվանդների համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով անհրաժեշտ դեղերի (այդ թվում՝ չգրանցված) ձեռքբերուման, ներմուծուման, բաշխման և իրացման գործընացի ընթացքը:

«Հաշտարարության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է սահմանել վեճերի լուծման պարտադիր հաշտարարության կարգ աշխատանքային վեճերի որոշակի տեսակների համար:

«Էլեկտրաէներգետիկայի մասին» օրենք (հասանելի հետևյալ հղումով)

- «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի մշակումը և ընդունումը հաշվի կառնի ԵՄ դիրեկտիվների պահանջները: Օրենքը կարգավորելու է էլեկտրաէներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, նույն ոլորտում գործունեություն իրականացնող անձանց և էլեկտրաէներգիա սպառողների փոխհարաբերությունները:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթի կարգավորման առարկան անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների կիրառման, փոփոխման և դադարման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տվյալների ստեղծման, մուտքագրման, փոփոխման, պահպանման և օգտագործման հարաբերություններն են:
- Փոփոխվում է համապատասխան գործառնությունների իրականացման իրավասությունների բաշխումը, սահմանվում է տվյալների ստեղծման և դրանց հավաստիության համար պատասխանատու մարմինը: Ի թիվս այլնի, նախատեսվում է հասցեների մասով տվյալների ստեղծման և դրանց պետական համակարգերում արտացոլման միասնական գործընթաց: Համայնքի ղեկավարի կողմից հասցե տրամադրելու մասին որոշման ընդունումից հետո հասցեի տվյալը համայնքի կողմից անմիջապես մուտքագրվելու է համապատասխան էլեկտրոնային համակարգ և հասանելի է դառնալու Կադաստրի կոմիտեին:

«ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է հաստատել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա տպագրման ենթակա տեղեկատվությունը: Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա պետք է տպագրված լինի ի թիվս այլնի հետևյալ տեղեկատվությունը. կտրոնի հերթական համարը (ԿՀ)՝ 8 նիշ, հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի անվանումը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության վայրի հասցեն, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մականիշը և հաշվառման համարանիշը, հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի ՀՎՀՀ-ն և այլն: